

# ՊԱՅԲԱԲ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱԴԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆՈՒԱԾ 1899ԻՆ, ԻՐԻ «ԶԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ»

«ՊԱՅԲԱԲ» — ՍԵՊՏԵՄԲԵՐ 4, 1976

## Հայրենի Փրոֆեսորը Միացեալ Նահանգներու մէջ

# SECURITY COUNCIL CONSEIL DE SECURITE



ՓՐՈՓ. ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍԵԱՆ  
ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի շէնքին առջեւ

Օգոստոս 16էն 20ի միջեւ, Թեմա  
նահանգի Լուպոլֆ քաղաքին մէջ  
տեղի ունեցաւ աղի ջուրերու ոռոգ-  
ման միջազգային ժողով մը:

Այս ժողովին կը մասնակցէր Հա-  
յաստանի հողագիտութեան եւ երկ-  
րագործական տարրաբանութեան  
գիտահետազոտական հաստատու-  
թեան տնօրէն՝ Փրոֆ. Տոբ. Հրանդ  
Պետրոսեանը:

Անոր զեկուցումին նիւթն էր «Ա-  
րարտեան դաշտավայրի աղոտ հո-  
ղերի իւրացման եւ աղիացած ջրերի  
օգտագործումը»:

Փրոֆ. Պետրոսեանը շատ անգամ-  
ներ պաշտօնապէս ուղարկուած է  
արտասահման, ինչպէս՝ Եգիպտոս,  
Գուպա, Միացեալ Նահանգներ  
(1967ին) Ֆրանսա, Հոլանտա, Անգ-  
լիա եւ այլն:

Ան իւրեան Հողագիտու-  
թեան Ընկերութեան փոխ-նախա-  
գահն է, իսկ Սփիւռհայութեան  
հետ Մշակութային Կապի Կոմիտէի  
պատուոյ անդամ:

Փրոֆ. Պետրոսեանի գլխաւորու-  
թեամբ, Հայաստանի մէջ, ընդամէնը  
մէկ ու կէս տասնամեակի ընթացքին  
ստեղծուած է հողագիտութեան եւ  
երկրագործական տարրաբանութեան  
գիտահետազոտական հաստատու-  
թիւնը, որ իր անձնակազմին ստեղ-  
ծագործ աշխատանքին շնորհիւ այժմ  
Հայաստանի մէջ եղած աղի հողերը  
բերրի եւ մշակման պիտանի հողեր  
կը դարձնէ:

Փրոֆ. Պետրոսեանը, դէպի Թեմ-  
ասա իր ուղեւորութեան ընթացքին,  
երկու օր մնաց Նիւ Եորք եւ այցելեց  
շատ մը տեսարժան վայրեր, ինչ-  
պէս՝ ՄԱԿի պաշտօնատեղին: